22.02.2010
11010081

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1038 - Ն «07» 12 2009

## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3112 «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ /ՖԵՐՄԵՐԱՅԻՆ/ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009թ. ՀՈՒԼԻՍԻ 13-Ի N 627-Ն ՀՐԱՄԱՆԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009թ. մայիսի 12-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու նպատակով ստեղծվող ոլորտային հանձնաժողովների կազմը՝ ըստ մասնագիտական խմբերի հաստատելու մասին» N 445-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովների փորձագիտական եզրակացությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական /ֆերմերային/ տնտեսության կազմակերպում» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:
2. Չեղյալ ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009թ. հուլիսի 13-ի «Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական /ֆերմերային/ տնտեսության կազմակերպում» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» N 627-Ն հրամանը:
3. Նախարարության աշխատակազմի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությանը (պետ՝ Ա. Աղբալյան) և օրենսդրության և իրավաբանական վարչությանը (պետ՝ Մ. Գրիգորյան) սահմանված կարգով հրամանը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
4. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին:

ՆԱԽԱՐԱՐ Ա.ԱՇՈՏՅԱՆ

Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2009թ. դեկտեմբերի 7 -ի N 1038-Ն հրամանի

# ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3112 «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ (ՖԵՐՄԵՐԱՅԻՆ) ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

## ԳԼՈՒԽ 1.
## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3112 «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ (ՖԵՐՄԵՐԱՅԻՆ) ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության «Մասնագետ» որակավորման աստիճանի 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության համար մասնագիտացումներ սահմանված չէ:

3. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում է «Ֆերմեր» որակավորում:

4. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականցվել հետևյալ ձևերով՝

1) առկա,

2) հեռակա,

3) հեռավար (դիստանցիոն),

4) դրսեկության (էքստեռնատ):

5. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

1) կրթության առկա ձևով

ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 3 տարի

բ. հիմնական ընդհանուր կրթության հիմքով 4 տարի

2) կրթության հեռակա ձևով

ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 4 տարի

3) դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:

6. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 3960 ժամ է, առավելագույն ծավալը՝ 6642 ժամ: Հիմնական ընդհանուր կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

## ԳԼՈՒԽ 2.
## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3112 «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ (ՖԵՐՄԵՐԱՅԻՆ) ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

1) իրականացնել ֆինանսական գործունեության պլանավորում,
2) կազմել բիզնես պլաններ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով,
3) որոշել արտադրության համար մշակաբույսերի, ընտանի կենդանիների և թռչունների տեսակները, անհրաժեշտ քանակը և պլանավորել հետագա աշխատանքները,
4) ձեռք բերել համապատասխան քանակությամբ սերմեր, տնկիներ, անհրաժեշտության դեպքում համալրել անասնագլխաքանակը,
5) ձեռք բերել անհրաժեշտ քանակությամբ և տեսակի պարարտանյութեր, թունաքիմիկատներ և անասնակեր,
6) կազմակերպել առավել արդյունավետ տեխնոլոգիական մեթոդներով բանջարեղենի, տնկիների և սերմերի արտադրություն,
7) կազմակերպել հողի նախապատրաստումը, ցանքսը, տնկումը, մշակաբույսերի խնամումը, ոռոգումը և բերքահավաքը,
8) հետևել անասնակերի ժամանակին և որակյալ կերաբաժինների կազմման և կենդանիների կերակրման գործընթացին,
9) ապահովել որակյալ խտացրած և հյութալի կերերի անհրաժեշտ քանակությունը,
10) կազմակերպել բուսաբուծական մթերքների արտադրություն, պահպանում և վերամշակում,
11) կազմակերպել անասնաբուծական մթերքների արտադրություն, պահպանում և վերամշակում,
12) պահպանել սննդի արտադրության անվտանգության նորմերը և իրականացնել սննդի անվտանգությանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ,
13) պահպանել շրջակա միջավայրի մաքրությունը և ապահովել էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական արտադրանք,
14) կազմակերպել մեքենայական պարկի արդյունավետ աշխատանքը, համալրելով այն արդի տեխնիկական միջոցներով և աշխատող կենդանական ուժով,
15) ապահովել գյուղատնտեսական մթերքների իրացումը,
16) կատարել համապատասխան վերլուծություն և որոշել տնտեսության առանձին ճյուղերի արդյունավետությունը և դրանց հետագա գործունեության ուղղվածությունը,
17) իրականացնել միջոցառումներ արտադրության բոլոր տեղամասերում տնտեսական արդյունավետության բարձրացման և ռեսուրսային պոտենցիալի ռացիոնալ օգտագործման ուղղությամբ,
18) որոշակի պարբերությամբ (3-5 տարի) մասնակցել որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացներին,
19) ապահովել գյուղացիական տնտեսության աշխատակիցների արդյունավետ աշխատանքը,
20) կազմել և ներկայացնել հարկային հաշվետվություններ,
21) կատարել ռիսկերի գնահատում և ձեռնարկել համապատասխան քայլեր դրանց կանխարգելման և/կամ ապահովագրման նպատակով,

22) ապահովել աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների կատարումը:

8. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտությամբ մասնագետի՝ զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

1) արտադրության կազմակերպման և ֆինանսական գործունեության պլանավորում, չափանիշը՝ ֆինանսների արդյունավետ բաշխում, անհրաժեշտ ֆինանսների ներգրավում և հաշվետվությունների ներկայացում, անհրաժեշտ քանակով նյութերի և բաղադրիչների ձեռք բերման պլանների կազմում,
2) բուսաբուծական և անասնաբուծական մթերքների արտադրության կազմակերպման հետ կապված գործառույթների իրականացում, գործող չափորոշիչներին համապատասխան արտադրվող մթերքների որակի և քանակի ապահովում,
3) բուսաբուծական և անասնաբուծական մթերքների արտադրության կազմակերպում, պահպանում և վերամշակում: Գործող չափանիշների համաձայն բարձր որակի ապահովում և կորուստների կրճատում,
4) մեքենայական պարկի աշխատանքի վերահսկում, համալրում այն արդի տեխնիկական միջոցներով և կենդանական քաշող ուժով: Ապահովել ագրեգատների նախապատրաստման, գյուղատնտեսական մեքենաների, գործիքների և այլ տեխնիկական միջոցների տեխնիկական սպասարկումների և նորոգումների իրականացում անհրաժեշտ ժամկետներում:

## ԳԼՈՒԽ 3.
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3112 «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ (ՖԵՐՄԵՐԱՅԻՆ) ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

9. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների յուրացում,
2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում աշխատանքային կոլեկտիվի անդամների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,
3) ինչպես տիպական, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում մասնագիտական հարցերի լուծումների տարբերակներ առաջարկելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորում,
4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը որոշակի սոցիալական և էթիկական հարցերի հետ որպես մեկ ամբողջություն դիտարկելու, ակտիվ քաղաքացիական գիտակցության դրսևորման կարողության ձևավորում,
5) մասնագիտական գործունեության գործառնությունները կիրառվող նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,
6) ինքնազարգացման և մասնագիտական կատարելագործման նպատակով իր և աշխատակիցների ուսումնառության կարիքները գնահատելու, դրանք իրագործելու ուղիներն առաջարկելու կարողության ձևավորում,
7) մասնագիտական և ընդհանուր բնույթի տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու կարողության ձևավորում,
8) աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպելու, խմբի անդամներին ուղղորդելու, նրանց անհատական հնարավորությունները գնահատելու և արդյունավետ օգտագործելու հմտությունների զարգացում,
9) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողությունների ձևավորում:

## ԳԼՈՒԽ 4.

## ՊԱՀԱՆՋՆԵՐ 3112 «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ (ՖԵՐՄԵՐԱՅԻՆ) ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

10. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) իմանալ ՀՀ Սահմանադրության, տվյալ բնագավառի աշխատանքները, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,
2) տիրապետել հայոց լեզվին,
3) հաղորդակցվել երկու օտար լեզուներով,
4) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
5) դրսևորել ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,
6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին,
7) իմանալ հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների վարվելակերպի տարրերը,
8) իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

11. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրներին,
2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը պետք է ըստ աղյուսակ 1-ում բերված մոդուլների ապահովի շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետում:

13. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ըստ աղյուսակ 2-ում բերված մոդուլների ապահովի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերում:

## ԳԼՈՒԽ 5.

## ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3112 «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ (ՖԵՐՄԵՐԱՅԻՆ) ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

14. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր

իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) Հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ: Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Հատուկ մասնագիտական դասընթացները պարապող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

3) Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը կարող է ունենալ ինչպես բարձրագույն մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական աշխատանքի փորձ: Առանձին մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկան կամ նրա որոշակի մասերը կարող է վարել նաև արհեստագործական կրթություն և բավարար մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորը:

4) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների լրիվ ցանկին: Այդ առարկաների և մոդուլների, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքերի) պետք է առկա լինեն դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցեր, գործնական խաղերի սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

16. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների,

բ. ռուսաց և օտար լեզուների,

գ. պատմության,

ե. կենսագործունեության անվտանգության,

զ. տնտեսագիտության,

է. բույսերի պաշտպանության,

ը. ուսումնամեթոդական:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա. քիմիայի,

բ. ագրոքիմիայի,

գ. բուսաբուծության,

դ. պտուղ բանջարեղենի վերամշակման,

ե. անասնաբուծության,
զ. մեքենայացման,
է. ինֆորմատիկայի:
3) Ուսումնական արհեստանոցներ
ա. ատաղձագործություն,
բ. խառատային:
4) Սպորտային համալիր՝
ա. մարզադահլիճ,
բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

2) Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պարապմունքները:

3) Ուսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնական տարում մինչև 100 ժամ:

4) Ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով:

5) Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ՝ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

6) Հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում դասախոսների հետ ուսանողների պարապմունքների ծավալը պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ:

18. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները:

2) Պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով:

3) Պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները:

4) Պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները:

5) Ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնա-արտադրական արհեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնափորձնական տեղամասերում,

ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում :

6) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար` շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում:

2) Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել ինչպես ուսումնական կիսամյակի ընթացքում այնպես էլ վերջում:

3) Ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին:

4) Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

5) Շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

6) Պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշչով 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտությամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

## ԳԼՈՒԽ 6.
## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 3112 «ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ (ՖԵՐՄԵՐԱՅԻՆ) ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է համաձայն աղյուսակ 3-ում բերված օրինակելի ուսումնական պլանի.

21. Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս`

1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,

2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,

3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում` չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,

4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մե-կը:

Աղյուսակ1

Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» | |
|---|---|
| Մոդուլի դասիչը | ԱՀՀ - 4-08-001 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը նախատեսված է նրանց համար, ովքեր կարիք ունեն զարգացնելու և ամրապնդելու հաղորդակցության իրենց ունակությունները: Մոդուլը կարելի է սովորել ոչ միայն մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այլև առանձին, քանի որ այն պարունակում է նաև ընդհանուր կրթության և անձի զարգացման համար կարևոր տարրեր: Սա նշանակում է, որ դասավանդողները պիտի խրախուսեն տարբեր մոտեցումներ բացահայտելու հնարավորությունները, ինչպես օրինակ՝ դերային խաղեր, տեսանյութեր, մամուլի ուսումնասիրություն և այլն: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը կզարգացնի հաղորդակցության կարևոր ունակություններ, ձեռք կբերի ինքնավստահություն, որպեսզի կարողանա արդյունավետ և ակտիվ կերպով հաղորդակցվել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև՝ անձնական կյանքում: |
| Մոդուլի տևողությունը | 51 ժամ |
| Մուտքային պահանջները | Նախնական հմտություններ կամ կարողություններ չեն պահանջվում: |
| Մոդուլի գնահատման կարգը | Յուրաքանչյուր արդյունքի համար բավարար առաջադիմության սահմանումը վկայում է ընդհանուր գնահատման համար անհրաժեշտ անցումային միավորի ձեռք բերման մասին: Այդուհանդերձ, մոդուլի ընթացքում ուսանողի կողմից կատարվող վարժությունների քանակը չպետք է սահմանափակվի գնահատման համար նախատեսված վարժություններով: Ուսանողին Հաղորդակցության մոդուլից անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում: |
| Ուսումնառության արդյունք 1 | Սահմանել ուսումնառության անձնական նպատակները |
| Կատարման չափանիշները | ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,<br>բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,<br>գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին |
| Կատարման չափանիշները | ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,<br>բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,<br>գ. տեղեկատվության առանձնացում/խմբավորումը նպատակային է կատարում,<br>դ. հաղորդումն իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը: |
| Ուսումնառության արդյունք 3 | Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ |
| Կատարման չափանիշները | ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են՝ պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը,<br>բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,<br>գ. ցուցաբերում է համոզելու հատկություն,<br>դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում: |
| Ուսումնառության արդյունք 4 | Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամաներ, քարտեզներ, և նկարներ |
| Կատարման չափանիշները | ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,<br>բ. մեկնաբանման համար օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք: |

| | |
|---|---|
| Ուսումնառության արդյունք 5 | Կատարել փաստաթղթավորում |
| Կատարման չափանիշները | ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը` ըստ նրանց նշանակության,<br>բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղը և դերը,<br>գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»** | |
| Մոդուլի դասիչը | ԱԱՕ-4-08-001 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը մշակվել է գյուղացիական տնտեսություններում աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսանողներին գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին բուժօգնության կազմակերպման հմտություններ տալու համար: Այն անհրաժեշտ է գյուղացիական տնտեսություններում բոլոր մակարդակների աշխատողներին: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախնական գիտելիքներ պետք չեն: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը և օրենքները,<br>բ. գիտի աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը,<br>գ. գիտի աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը,<br>դ. գիտի աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները,<br>ե. գիտի արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը,<br>զ. գիտի արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ կազմակերպություններում անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների, փոխադրամիջոցների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,<br>բ. գիտի էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը,<br>գ. գիտի հրդեհանվտանգության կանոնները և պաշտպանությունը,<br>դ. գիտի ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի վերաբերյալ պահանջները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի աշխատանքի պայմանների վերաբերյալ նորմատիվային պահանջները,<br>բ. գիտի արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները,<br>գ. գիտի արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը,<br>դ. պատկերացնում է արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ առաջին բուժօգնության կազմակերպումը և անհրաժեշտ միջոցները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի ճիշտ կատարել արհեստական շնչառություն,<br>բ. գիտի ճիշտ կատարել սրտի աշխատանքի վերականգնում,<br>գ. գիտի դադարեցնել արյան հոսքը և դնել վիրակապ,<br>դ. գիտիկոտրվածքների վիրակապման կարգը,<br>ե. Ճիշտ է կատարում առաջին բուժօգնությունն այրվածքների դեպքում:,<br>զ. Ճիշտ է կատարում առաջին բուժօգնությունն էլեկտրահարման դեպքում: |

Աղյուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 3112 «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՈՐԱԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ» | |
|---|---|
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08-001 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է գյուղացիական տնտեսության կազմակերպիչին տալ գիտելիքներ հողերի տեսակների, նրանց բերրիության հատկությունների, տարածված հողատիպերի, հողերի որակական հատկությունների, գնահատման մեթոդների, ինչպես նաև առանձին հողատիպերում տարբեր մշակաբույսերի տեղաբաշխման վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 105 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ տարածված հողատիպերը և հողատեսքերը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի հողերի տիպերի և հողատեսքերի բնութագիրը,<br>բ. գիտի ըստ հողատիպերի մշակաբույսերի տեղաբաշխման առանձնահատկությունները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ հողերի որակական գնահատման մեթոդները և ցուցանիշները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի հողերի որակական գնահատման մեթոդները,<br>բ. գիտի հողերի որակական գնահատման ցուցանիշների հմակարգը»<br>գ. կարող է վերցնել հողերի որակական գնահատման նմուշներ: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ հողի բերրիության տեսակները և նրանում ընթացող գործընթացները, |
| Կատարման չափանիշները | ա. գիտի հողի բնական բերրիության էությունը ճիշտ է ներկայացնում,<br>բ. գիտի բացատրում է հողի արհեստական բերրիության անհրաժեշտությունը,<br>գ. գիտի բացատրում է հողի տնտեսական բերրիությունը,<br>դ. գիտի ներկայացնում է տարբեր բերրիության հողերի օգտագործման արդյունավետ ուղղությունները ըստ տնտեսական շրջանների |
| Ուսումնառության արդյունք 4 | Կարողանալ հաշվարկել հողերի տնտեսական գնահատումը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի հողերի տնտեսական գնահատման մեթոդները,<br>բ. գիտի հողերի տնտեսական գնահատման հիմնական ցուցանիշները,<br>գ. կարողանում է հաշվարկել հողերի տնտեսական գնահատականը: |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈՂԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ» | |
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08-002 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է տալ գիտելիքներ հողի մշակման նպատակների և խնդիրների, հողի մշակման հիմնական և մակերեսային համակարգերի, նրանց կիրառման եղանակների և ձևերի մասին, կապված բույսերի աճի և զարգացման համար համապատասխան պահանջների և հողային պայմանների ստեղծման հետ: |
| Մոդուլի տևողությունը | 105 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել ԳՏԿ 4-08-003 մոդուլը: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի գնահատման ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: Կատարված գործընթացների երաշխավորված ժամաքանակների ապահովումը: |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ հողի մշակման անհրաժեշտությունը, նպատակը, խնդիրները, նրանց իրականացման տեխնոլոգիական գործընթացները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի հողի մշակման նպատակը և անհրաժեշտությունը,<br>բ. գիտի հողի մշակման տեխնոլոգիական գործընթացները: |

| | |
|---|---|
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ հողի հիմնական և մակերեսային մշակումների եղանակները և ձևերը, հողային գործոնների նկատմամբ մշակաբույսերի պահանջների առանձնահատկությունները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի հողի հիմնական և մակերեսային մշակման եղանակները,<br>բ. գիտի հողային գործոնների նկատմամբ մշակաբույսերի պահանջները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ հողի մշակման համակարգերի կիրառումն ըստ բնակլիմայական գոտիների կապված հողի ցանքային, հետցանքյա և բերքահավաքին հաջորդող գործընթացների հետ |
| Կատարման չափանիշները | ա. գիտի հողի մշակման համակարգերը տարբեր բնակլիմայական գոտիներում,<br>բ. գիտի նախացանքային, ցանքային և հետցանքյա գործընթացները,<br>գ. գիտի բերքահավաքին հաջորդող գործընթացները: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ ցելերի մշակման առանձնահատկությունները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի ցելերի էությունը և տեսակները,<br>բ. գիտի ցելերի կիրառման պայմանները,<br>գ. գիտի ցելերի կատարման տեխնոլոգիաները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐ, ՆՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ»** | |
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08-003 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է կարողանա որոշել անհրաժեշտ պարարտանյութերի քանակը տվյալ մշակաբույսերի համար, գիտենա պարարտանյութերը հող մտցնելու եղանակները, կարողանա հաշվարկել և համատեղ կիրառել օրգանական, հանքային և բակտերյալ պարարտանյութեր: Կարողանա տարբերել և դասակարգել պարարտանյութերը ըստ սննդանյութերի պարունակության և ազդեցության բնույթի: |
| Մոդուլի տևողությունը | 68 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել ԳՏԿ 4-08-001«Հողի տեսակները, նրանց որոկական գնահատումը» և ԳՏԿ 4-08-002 «Հողի մշակման համակարգեր» մոդուլները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքնչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ պարարտանյութերը հող մտցնելու ձևերը և եղանակները |
| Կատարման չափանիշները | ա. կարողանում է դասակարգել պարարտնյութերը,<br>բ. գիտի պարարտանյութերը հողը մտցնելու ձևերը,<br>գ. գիտի տարբեր մշակաբույսերի համար անհրաժեշտ պարարտնյութերի տեսակները,<br>դ. կարողանում է հաշվարկել յուրաքանչյուր մշակաբույսի համար միավոր մակերեսի հաշվով պարարտանյութի նորմաները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ որոնք են օրգանական պարարտանյութերը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի ինչպիսի օրգանական պարարտանյութեր կան (գոմաղբ, կոյաջուր, տորֆ, կոմպոստներ, թռչունների ծերտը),<br>բ. գիտի թե գոմաղբը իր մեջ ինչպիսի սննդարար նյութեր է պարունակում (ազոտ, ֆոսֆոր, կալիում, կալցիում, մագնեզիում),<br>գ. գիտի տարբեր մշակաբույսերին տրվող անհրաժեշտ քանակությամբ գոմաղբի դեպքում քանի ցենտներով է ավելանում բերքատվությունը,<br>դ. գիտի հիմնականում գոմաղբը երբ են դաշտ փոխադրում և ինչ մեքենաների օգնությամբ են հող մտցնում: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ որոնք են հանքային պարարտանյութերը |
| Կատարման չափանիշները | ա. կարողանա դասակարգել հանքային պարարտանյութերը, `<br>բ. իմանա հանքային տարբեր պարարտանյութերը ինչպիսի ազդեցություն են ունենում մշակաբույսերի վրա,<br>գ. իմանա հանքային պարարտանյութերը հող մտցնելու եղանակները և ժամանակը,<br>դ. իմանա ինչ մեքենաներով է կատարվում հանքային պարարտանյութերի տեղափոխումը և հող մտցնելը: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ ինչպես ճանաչել ամենագլխավոր հանքային պարարտանյութերը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի տարբերել ֆոսֆորական կամ կրային հանքային պարարտանյութերը, |

| | |
|---|---|
| | բ. գիտի տարբերել ազոտական կամ կալիական պարարտանյութը: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Իմանալ որոնք են բակտերիալ պարարտանյութերը |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի բակտերիալ պարարտանյութերի առանձնահատկությունները,<br>բ. գիտի բակտերիալ պարարտանյութերի ազդեցությունը տարբեր մշակաբույսերի վրա,<br>գ. գիտի տարբեր մշակաբույսերի մշակման համար անհրաժեշտ տարբեր բակտերիաների քանակը: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Իմանալ պարարտացման համակարգը խոտադաշտային ցանքաշրջանառությունում |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի օրգանական և հանքային պարարտանյութերի ճիշտ կիրառումը,<br>բ. գիտի պլանավորել պարարտանյութերը հող մտցնելու միջոցառումները` կուտակումը, ճիշտ պահպանումը և ժամանակին դաշտ փոխադրումը: |
| **Ուսումնառության արդյունք 7** | Կարողանալ որոշել օրգանական և անօրգանական պարարտանյութերի անհրաժեշտ քանակը տվյալ մշակաբույսի համար |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի որոնք են օրգանական պարարտանյութերը և դրանք տարբերի անօրգանական պարարտանյութերից,<br>բ. կարողանում է տալ պարարտանյութերի դասակարգումը ըստ սննդանյութերի պարունակության և ազդեցության նյութի: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲՈՒՅՍԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՌԵԺԻՄՆԵՐԸ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԳՏԿ 4-08-004 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է տալ գիտելիքներ կենդանական աշխարհի գոյատևության համար օրգանական նյութ ստեղծող մշակաբույսերի կյանքին անհրաժեշտ պահանջների, նրանց ունեցած դերի, նշանակության, ինչպես նաև այն պայմանների մասին, որոնք պետք է նպաստեն օրգանական նյութերի ստացմանը: |
| **Մոդուլի տևողությունը** | 105 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել ԳՏԿ 4-08-002 «Հողի մշակման համակարգեր» և ԳՏԿ 4-08-003 «Պարարտանյութեր, նրանց տեսակները և օգտագործումը» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ մշակաբույսերի կյանքի անհրաժեշտ գործոնները, նրանց դերը և նշանակությունը |
| **Կատարման չափանիշները** | ա. Ճիշտ է պատկերացում և շարադրում բույսերի կողմից օրգանական նյութ (բերք) ստեղծելու համար բույսերի կյանքին անհրաժեշտ պահանջները (գործոնները),<br>բ. գիտի այդ գործոնների դերն ու նշանակությունը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ բույսի կյանքին անհրաժեշտ գործոնների հիմնավորման գիտական երկրագործության օրենքները և դրանց կիրառման արդյունավետությունը |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի գիտական երկրագործության օրենքները,<br>բ. գիտի բույսերի կողմից օրգանական նյութի ստեղծման համար երկրագործության օրենքների կիրառման արդյունավետությունը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ յուրաքանչյուր գործոնի գործընթացի Տարբեր մշակաբույսերի պահանջներին համապատասխան պայմանների ստեղծումը |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի տարբեր բույսրեի պահանջներին համապատասխան նրանց աճի և զարգացման համար անհրաժեշտ պայմանները,<br>բ. գիտի բնակլիմայական տարբեր գոտիներում մշակաբույսերի կառուցվածքի ճիշտ սահմանումը, նախորդների ճիշտ ընտրումը, հողի մշակումը, պարարտացումը, վնասակար ազդակների դեմ պայքարի միջոցառումների կիրառումը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԱՇՏԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԳՏԿ 4-08-005 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ դաշտային մշակաբույսերի դասակարգման, սելեկցիայի և սերմնաբուծության, էլիտային սորտերի ստացման, հացահատիկային, ծավարային, հատիկաընդեղեն, յուղատու, եթերայուղատու, թելատու մշակաբույսերի, եգիպտացորենի, սորգոյի,պալարապտուղների և նարկոտիկ բույսերի մշակության տեխնոլոգիաների, նրանց նշանակության և դերի, օգտագործման, կենսաբանական առանձնահատկությունների, աճի և |

| | |
|---|---|
| | զարգացման, աճի փուլերի անցման համար ունեցած պահանջների, բերքի, բերքահավաքի և պահեստավորման վերաբերյալ: |
| **Մոդուլի տևողությունը** | 87 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳՏԿ 4-08-002 «Հողի մշակման համակարգեր», ԳՏԿ 4-08-003 «Պարարտանյութեր, նրանց տեսակները և օգտագործումը» և ԳՏԿ 4-08-004«Բույսերի կյանքին անհրաժեշտ գործոնները և նրանց ռեժիմները» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ դաշտային մշակաբույսերի տեսակները և մշակման տեխնոլոգիաները |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի մշակաբույսերի տեսակները,<br>բ. գիտի մշակաբույսերի մշակման տեխնոլոգիաները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ դաշտային մշակաբույսերի առանձին սորտերի կենսաբանական առանձնահատկությունները կախված վեգետացիայի տևողության և մշակության ժամկետների հետ |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի դաշտային մշակաբույսերի առանձին սորտերի կենսաբանական առանձնահատկությունները,<br>բ. գիտի տարբեր մշակաբույսերի վեգետացիայի տևողությունները և մշակության ժամկետները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ գյուղատնտեսական մշակաբույսերի աճի տարբեր փուլերում ունեցած պահանջները կախված բնակլիմայական տարբեր գոտիների պայմանների հետ |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի տարբեր գոտիների բնակլիմայական պայմանները,<br>բ. գիտի մշակաբույսերի աճի տարբեր փուլերում առաջադրվող պահանջները: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ բերքահավաքի ժամկետները, բերքահավաքի, բերքի տեղափոխման և պահեստավորման գործընթացները |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի բերքի հասունության աստիճանի որոշման ձևերը և բերքի մոտավոր քանակը,<br>բ. կարողանում է որոշել բերքահավաքի ժամկետները,<br>գ. գիտի բերքահավաքի, բերքի տեղափոխման և պահեստավորման գործընթացները: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Իմանալ դաշտային մշակաբույսերի մշակության մեքենայացման և խնամքի գործընթացները |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի դաշտային մշակաբույսերի մշակության մեքենայացման գործընթացները,<br>բ. գիտի հացահատիկի խնամքի գործընթացները: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Իմանալ տարբեր մշակաբույսերի ցանքսի նորմաները և սերմացուի նախապատրաստումը |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի տարբեր մշակաբույսերի ցանքսի նորմաները,<br>բ. գիտի սերմացուի նախապատրաստման գործընթացները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԳՏԿ 4-08-006 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ավտոմոբիլների, տրակտորների, գյուղատնտեսական մեքենաների, անասնապահական տեղակայանքների և սարքավորումների տեսակների, նրանց կառուցվածքի, շահագործման և տեխնիկական սպասարկումների, մեքենատրակտորային ագրեգատների (ՄՏԱ) ռացիոնալ կոմպլեկտավորման, աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների վերաբերյալ, ձևավորել ՄՏԱ-ի շահագործման ցուցանիշները հաշվարկելու դրանք աշխատանքին նախապատրաստելու, դաշտում կարգավորելու և վարելու, վառելանյութերի և քսայուղերի տեսակները տարբերելու, նրանց անհրաժեշտ քանակը որոշելու, ինչպես նաև պահպանում իրականացնելու կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 85 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳՏԿ4-08-002«Հողի մշակման համակարգեր», ԳՏԿ4-08-003 «Պարարտանյութեր, նրանց տեսակները և օգտագործումը» և ԳՏԿ4-08-005«Դաշտային մշակաբույսերի մշակություն և բերքահավաքի տեխնոլոգիաներ» մոդուլները: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |

| | |
|---|---|
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ մեքենաների համակարգը, բուսաբուծական և անասնապահական մթերքների արտադրության տեխնոլոգիական գործընթացների համալիր մեքենայացման և ավտոմատացման միջոցները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի բուսաբուծական և անասնապահական մթերքների արտադրության գործընթացները,<br>բ. գիտի տնտեսությանն անհրաժեշտ տեխնիկական միջոցների ընտրության մեթոդը: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների կառուցվածքը, տեխնիկական և շահագործական ցուցանիշները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի գիտի մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,<br>բ. ընտրում կամ որոշում է տեխնիկական միջոցների շահագործական ցուցանիշները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Կազմել մեքենատրակտորային ագրեգատներ, որոշել նրանց կազմն ու քանակը |
| Կատարման չափանիշները | ա. ըստ սահմանված ագրոժամկետների և աշխատանքի ծավալի որոշում է մեքենայական ագրեգատների, վառելանյութերի և քսայուղերի քանակը,<br>բ. կազմում է տրակտորների և ավտոմոբիլների ծանրաբեռնվածության գրաֆիկներ: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ տեխնիկական սպասարկումների տեսակները և քանակը |
| Կատարման չափանիշները | ա. ըստ գործող չափորոշիչների որոշում է տեխնիկական սպասարկումների և նորոգումների տեսակները, քանակը և կատարման ժամկետները,<br>բ. կազմում է տրակտորների, ավտոմոբիլների, գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների պլան գրաֆիկը: |
| Ուսումնառության արդյունք 5 | Իմանալ մեքենաների պահպանման եղանակները և տեխնոլոգիան |
| Կատարման չափանիշները | ա. գիտի տեխնիկայի պահպանման դրույթներն և հրահանգները,<br>բ. գիտի բաց, փակ և կոմբինացված պահպանման եղանակների առանձնահատկությունները,<br>գ. գիտի պահպանման ժամանակ տեխնիկական միջոցների խնամքի և տեխնիկական սպասարկման ձևերն և միջոցները,<br>դ. գիտի պահպանման ժամանակ հակահրդեհային միջոցառումների և միջոցների մասին: |
| Ուսումնառության արդյունք 6 | Իմանալ տրակտորային ագրեգատների և ավտոմոբիլների վարման անվտանգության կանոնները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի տրակտորների և ավտոմեքենաների վրա աշխատելու ժամանակ կիրառվող անվտանգության կանոնները,<br>բ. գիտի տրակտորիստին և ավտովարորդին անհրաժեշտ հոգեֆիզիկական և հոգեկան պահանջվող հատկությունները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊՏՂԻ ԵՎ ԽԱՂՈՂԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»** | |
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08-007 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ խաղողի և պտղատու այգիների մշակության, բերքահավաքի տեխնոլոգիաների և օգտագործվող մեքենաների վերաբերյալ, ձևավորել պտղատու ծառերի տեսակների ընտրության, դաշտի նախապատրաստման, տնկման, խնամքի, հիվանդությունների կանխորոշման և բուժման, բերքահավաքի, տեղափոխման և պահպանության, տեխնիկական միջոցների ընտրության և օգտագործման վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 87 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳՏԿ4-08-002«Հողի մշակման համակարգեր», ԳՏԿ4-08-003«Պարարտանյութեր, նրանց տեսակները և օգտագործումը» և ԳՏԿ4-08-005«Դաշտային մշակաբույսերի մշակություն և բերքահավաքի տեխնոլոգիաներ» մոդուլները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ պտղատու տնկարանների հիմնման, տնկանյութի արտադրության տեխնոլոգիան |
| Կատարման չափանիշները | ա. կարողանում է կատարել խաղողի և պտղի տեսակների ընտրություն ըստ հողակլիմայական պայմանների և գոտիականության,<br>բ. գիտի պտղատու տնկարանների հիմնման, և տնկանյութի արտադրության տեխնոլոգիական գործընթացները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ այգիների հիմնման հողատարածքի ընտրության, նախապատրաստման և կարգավորման տեխնոլոգիան |
| Կատարման չափանիշները | ա. գիտի այգիների հիմնման համար հողատարածքի ընտրության և նախապատրաստման չափանիշները, |

| | |
|---|---|
| | բ. գիտի դաշտի ձևանշման և ծառերի սնման մակերեսի որոշման հիմնական չափանիշները,<br>գ. գիտի այգիների հողի նախապատրաստման տեխնոլոգիական գործընթացները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ խաղողի արմատակալների և պտղի տնկիների տնկման գործընթացը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի տնկման փոսերի փորման և ակոսների անցկացման գործընթացները,<br>բ. գիտի խաղողի արմատակալների և պտղի տնկիների տնկման ձևերը,<br>գ. գիտի խաղողի անդալիզի գործընթացը: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ այգու հողի մշակության, այգեթաղի և այգեբացի գործընթացները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի այգում հողի միջշարային և միջբնային մշակման տեխնոլոգիական գործընթացները և ագրոտեխնիկական պահանջները,<br>բ. գիտի ոռոգման ակոսների և ջրապահ հարթակների պատրաստման տեխնոլոգիան,<br>գ. գիտի այգեթաղի և այգեբացի գործընթացները: |
| Ուսումնառության արդյունք 5 | Իմանալ ծառերի և վազերի էտի և ձևավորման գործընթացը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի էտի եղանակները և դրանց ազդեցությունը բույսերի վրա,<br>բ. գիտի էտի ժամկետները, տեխնիկան և գործիքները: |
| Ուսումնառության արդյունք 6 | Իմանալ խաղողի վազերի և պտղատու ծառերի պատվաստման գործընթացը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի ծառերի և վազերի պատվաստման դերը խաղողաբուծության և պտղաբուծության ինտենսիվացման գործում,<br>բ. գիտի պատվաստակալներին ներկայացվող պահանջները և պատվաստման ձևերը: |
| Ուսումնառության արդյունք 7 | Իմանալ այգիների սնուցման, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի պտղատու ծառերի և վազերի հանքային սննդառության առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը բույսերի բերքատվության և պտուղների որակի վրա,<br>բ. գիտի պարարտանյութերի տեսակները, պարարտացման ձևերն ու նորմաները, ժամկետները և սնուցման եղանակները: |
| Ուսումնառության արդյունք 8 | Իմանալ բերքահավաքի, բերքի տեղափոխման և պահեստավորման գործընթացները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի պտղի և խաղողի հասունության աստիճանի, բերքատվության և բերքահավաքի ժամկետների որոշման մեթոդները,<br>բ. գիտի բերքահավաքի եղանակները և անհրաժեշտ տեխնիկական, տրանսպորտային և օժանդակ միջոցները,<br>գ. գիտի բերքի պահեստավորման գործընթացը,<br>դ. գիտի բերքահավաքի ժամանակ աշխատանքի անվտանգության կանոնները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ»** | |
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08- 08 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ հողերի մելիորացման և կուլտուրականացման, ալկալի աղուտների մելիորացման, մելիորացված հողերի գյուղատնտեսական յուրացման, ագրոտեխնիկական և ագրոմելիորատիվ միջոցառումների, ոռոգման անձրևացման եղանակի կիրառման, դրենաժային ջրերի օգտագործման, քարքարոտ հողերի մելիորացման և կուլտուրականացման, ճահճային հողերի մելիորացման և հողերի կուլտուրականացման ագրոմելիորատիվ միջոցառումների վերաբերյալ և ուսանողների մեջ ձևավորել համապատասխան կարողություններ: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել ԳՏԿ 4-08-001«Հողի տեսակները, նրանց որակական գնահատումը», ԳՏԿ 4-08-002 « Հողի մշակման համակարգեր» մոդուլները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք1 | Իմանալ որոնք են ալկալի - աղուտները և ինչպես պետք է կատարել այդպիսի հողերի մելիորացում |
| Կատարման չափանիշները | ա. գիտի ալկալի աղուտների տարածումը և կարողանա տալ նրանց բնութագիրը,<br>բ. գիտի աղերի առաջացման պատճառները,<br>գ. գիտի ինչպես են կատարում ալկալի-աղուտ հողերի մելիորացումը: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ մելիորացված հողերի գյուղատնտեսական յուրացման ագրոտեխնիկական և ագրոմելիորատիվ միջոցառումները |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի ոռոգման անձրևացման եղանակը, նրա կիրառումը մելիորացված ալկալի աղուտ հողերում,<br>բ. գիտի որ դեպքում է տեղի ունենում հողերի կրկնակի աղակալում և կարողանա կազմակերպել պայքարի միջոցառումներ,<br>գ. գիտի հողի փխրեցման միջոցով ջրաթափանցելիության և ֆիլտրացման արագության մեծացման նշանակությունը բույսի աճի վրա,<br>դ. գիտի հողի աղազերծման համար ինչ հերթականությամբ, ինչ մշակաբույսեր պետք է մշակել: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ և կարողանալ իրականացնել մելիորացված ալկալի աղուտներում մշակվող պտղատուների ջրումը անձրևացման եղանակով |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի ալկալի-աղուտ հողերում արհեստական անձրևացման եղանակով պտղատու այգիների ջրման համար անհրաժեշտ սարքերի տեսակները,<br>բ. գիտի ջրման տարբեր եղանակների ազդեցությունը մելիորացված հողերի ջրաաղային և ֆիզիկա- քիմական հատկությունների վրա,<br>գ. գիտի որ թերի մելիորացված հողերում անձրևացումով ջրում չի երաշխավորվում. |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ և կարողանալ կազմակերպել անձրևացման ստացիոնալ համակարգի կառավարման պրոցեսի ավտոմատացումը |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի անձրևացման եղանակով արտադրողականության բարձրացման և ջրի ռացիոնալ օգտագործման առավելությունները,<br>բ. գիտի ջրման պրոցեսի ավտոմատացման հնարավորությունները և առավելությունները: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Իմանալ ալկալի հողերի մելորացման եղանակները |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի հողերի պահպանումը կրկնակի առաջացումից և ճահճացումից<br>բ. կարողանում է կազմակերպել մելիորացված ալկալի աղուտների ագրոքիմիական հատկությունների բարելավում,<br>գ. գիտի ալկալի աղուտների քիմիական մելիորացիայի տեխնոլոգիան և հաշվարկի տնտեսական արդյունավետությունը: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Կարողանալ կազմակերպել քարքարոտ հողերի մելիորացիան և կուլտուրականացումը |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի քարքարոտ հողերի մելիորացիան և կուլտուրականացումը,<br>բ. գիտի դարավանդումը որպես լանջերի հողերի արդյունավետ օգտագործման միջոցառում,<br>գ. գիտի քարքարոտ հողերի խմբերը և տարբերել իրարից,<br>դ. գիտի մակերեսային և խորքային քարքարոտության տեսակները,<br>ե. գիտի պետք է ծանոթ լինի քարքարքտ հողերի յուրացման տեխնոլոգիային և օգտագործվող մեխանիզմներին: |
| **Ուսումնառության արդյունք 7** | Կարողանալ կազմակերպել հողերի կուլտուրականացման ագրոմելիորատիվ միջոցառումները |
| **Կատարման չափանիշները** | ա. կարողանում է կատարել արմատաբնակ շերտի և վարելաշերտի կուլտուրականացում,<br>բ. գիտի ինչպես կարելի է ստեղծել հզոր կուլտուրականացված վարելաշերտեր,<br>գ. գիտի ենթավարելաշերտի փխրեցումը ինչպիսի ազդեցություն է թողնում հողի ջրաթափանցելիության վրա: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԵՐԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԳՏԿ 4-08-009 |
| **Մոդուլի նպատակը** | Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքնե կերային մշակաբույսերի դերի, անասուններին անհրաժեշտ քանակի տարբեր տեսակի կերերով ապահովելու, առանձին դեպքերում հողատարման դեմ պայքարի և ցանկաշրջանառություններում նրանց ունեցած դերի վերաբերյալ: |
| **Մոդուլի տևողությունը** | 51 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ պետք է ուսումնասիրած լինի ԳՏԿ4-08-003 «Պարարտանյութեր, նրանց տեսակները և օգտագործումը» մոդուլը: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ ցանովի կերային մշակաբույսերը, նրանց մշակության տեխնոլոգիաները |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի ցանովի կերային մշակաբույսերի տեսակները, |

| | |
|---|---|
| | բ. գիտի ցանովի կերային մշակաբույսերի մշակության տեխնոլոգիաները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ բնական արոտներ և խոտհարքներ, մակերեսային և արմատական բարելավման տեխնոլոգիական գործընթացները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի բնական արոտներ և խոտհարքներ մակերեսային բարելավման տեխնոլոգիական գործընթացները,<br>բ. գիտի բնական արոտներ և խոտհարքներ արմատական բարելավման տեխնոլոգիական գործընթացները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ կերերի տեսակները՝ կոպիտ, հյութալի, խտացրած կերերի ստացման տեխնոլոգիաները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի կերերի տեսակները, նրանց որակական հատկանիշները,<br>բ. գիտի կոպիտ, հյութալի և խտացրած կերերի ստացման համար. անհրաժեշտ մշակաբույսերի տեսակները և նրանց մշակության տեխնոլոգիաները,<br>գ. գիտի կոպիտ, հյութալի և խտացրած կերերի ստացման տեխնոլոգիաները: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ կոպիտ, հյութալի և խտացրած կերերի ստացման համար. անհրաժեշտ մշակաբույսերի տեսակները և նրանց մշակության տեխնոլոգիաները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի կոպիտ, հյութալի և խտացրած կերերի ստացման համար. անհրաժեշտ մշակաբույսերի տեսակները,<br>բ. գիտի կոպիտ, հյութալի և խտացրած կերերի ստացման համար. անհրաժեշտ մշակաբույսերի մշակության տեխնոլոգիաները: |
| Ուսումնառության արդյունք 5 | Իմանալ կերերի օգտագործման ձևերը և ժամկետները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի կերերի օգտագործման ձևերը,<br>բ. գիտի կերերի օգտագործման ժամկետները: |
| Ուսումնառության արդյունք 6 | Իմանալ կերային մշակաբույսերի բերքահավաքը, բերքի տեղափոխումը, պահեստավորումն ու պահպանումը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի կերային մշակաբույսերի բերքահավաքի գործընթացները,<br>բ. գիտի բերքի տեղափոխման գործընթացները,<br>գ. գիտի բերքի պահեստավորման և պահպանման գործընթացները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»** | |
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08-010 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ գյուղատնտեսության վիճակագրության հիմնական հասկացությունների, մեթոդների բացարձակ և հարաբերական միջին մեծությունների, վիճակագրական բաշխումների, ընտրանքային դիտարկման, սոցիալ-տնտեսական երևույթների փոխադարձ կապերի, դինամիկ շարքերի, ինդեքսների և դրանց օգտագործման, վիճակագրական ցուցանիշների խմբավորման մեթոդների և տարբեր գործոնների ազդեցության պատճառա-հետևանքային կապերի վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 102 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի «Տնտեսագիտության հիմունքներ», «Սոցիոլոգիայի հիմունքներ» առարկաները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողական յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ վիճակագրական հիմնական մեծությունների, վիճակագրական բաշխումների, ընտրանքային դիտարկման, սոցիալ-տնտեսական երևույթների փոխադարձ կապերի, դինամիկ շարքերի, ինդեքսների և դրանց օգտագործման վիճակագրական ցուցանիշների խմբավորման մեթոդների և տարբեր գործոնների ազդեցության պատճառա-հետևանքային կապերի վերաբերյալ |
| Կատարման չափանիշները | ա. կատարում է վիճակագրական դիտարկումներ,<br>բ. լրացնում է վիճակագրական փաստաթղթեր,<br>գ. ճիշտ է հաշվարկում հարաբերական և բացարձակ միջին մեծությունները, կազմում է դինամիկայի շարքերը: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ արտադրական և տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վրա ազդող գործոնները և կատարի այդ գործոնների դերի վիճակագրական վերլուծություն՝ բուսաբուծության ճյուղում (ցանքատարածություններ, սերմեր, բերքատվություն), անասնաբուծության ճյուղում (անասնագլխաքանակ, մթերատվություն, կերեր), ագրոտեխնիկական և |

| | |
|---|---|
| | տոհմային աշխատանքների կատարման վիճակագրական հիմնավորումները |
| Կատարման չափանիշները | ա. Կարողանում է կատարել տնտեսության օրինակով վիճակագրական վերլուծություն՝ բացարձակ և հարաբերական վիճակագրական մեծությունների, միջին մեծությունների, վարիացիայի ցուցանիշների, ինդեքսների, դինամիկ շարքերի օգնությամբ բուսաբուծության ճյուղի և անասնաբուծության ճյուղի ցուցանիշների ուղղությամբ (ցանքատարածությունների, բերքի, բերքատվության, համախառն բերքի, հոտի վերարտադրության, մթերատվության, գլխաքանակի շարժի փոփոխությունները, դինամիկան): |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԵՌՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ՊԱՀԵՍՏԱՎՈՐՈՒՄ, ԲԱՇԽՈՒՄ» | |
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08-011 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ տրանսպորտի դերի, բեռների տեսակի, նրանց քանակի և չափերի, բեռնափոխադրումների ծավալի որոշման, երթուղիների կազման, բեռնման և բեռնաթափման ձևերի և միջոցների, ինչպես նաև բեռների և արտադրանքի պահեստավորման վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 51 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԳՏԿ 4-08-005«Դաշտային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաները», ԳՏԿ4-08-006«Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում», ԳՏԿ4-08-007 «Պտղի և խաղողի արտադրության տեխնոլոգիա» մոդուլները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովու |
| Ուսումնառության արդյունք1 | Իմանալ տրանսպորտային միջոցների տեսակները, նրանց կառուցվածքը և հնարավորությունները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի տրանսպորտային միջոցների տեսակները, կառուցվածքը, տեխնիկական ցուցանիշները և նշանակությունը,<br>բ. գիտի տրանսպորտային միջոցների շահագործման ցուցանիշները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ բեռնման և բեռնաթափման միջոցների տեսակները և կառուցվածքը |
| Կատարման չափանիշները | ա.. գիտի բեռնման և բեռնաթափման միջոցների տեսակները, նրանց կառուցվածքը, տեխնիկական ցուցանիշները,<br>գիտի բեռնման և բեռնաթափման միջոցների շահագործման ցուցանիշները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ բեռների տեսակները, նրանց բեռնման, տեղափոխման և բեռնաթափման անվտանգության կանոնները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի բեռների տեսակները, նրանց հատկությունները, հնարավոր գաբարիդային չափերի սահմանային արժեքները,<br>բ. գիտի բեռների բեռնման, տեղափոխման և բեռնաթափման անվտանգության կանոնները: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ փոխադրումների, շարժման երթուղիների տեսակները, բեռնաշրջանառության, բեռնահոսքերի և բեռնափոխադրումների ծավալների որոշման գործընթացը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի բեռնափոխադրումների և երթուղիների տեսակները,<br>բ. գիտի բեռնաշրջանառության, բեռնահոսքերի և բեռնափոխադրումների ծավալների որոշման գործընթացը: |
| Ուսումնառության արդյունք 5 | Իմանալ գյուղատնտեսական արտադրանքի և տարբեր տեսակի բեռների տեղափոխման համար անհրաժեշտ կոնտեյներների, արկղերի, բալոնների և այլ փաթեթավորման միջոցների տեսակները, նրանց չափերը և նշանակությունը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի գյուղատնտեսական արտադրանքի տեսակները,<br>բ. գիտի տարբեր տեսակի բեռների տեղափոխման անհրաժեշտ կոնտեյներների, արկղերի, բալոնների և այլ փաթեթավորման միջոցների տեսակները, չափերը և նշանակությունը: |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՔԵՏԻՆԳ» | |
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08-012 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը նպատակն է սովորեցնել գյուղատնտեսական արտադրանքի սպառման առավել արդյունավետ մեթոդների, մարքետինգային ռազմավարությունների կիրառման, համապատասխան փաթեթավորման մշակման, շուկաների և արտադրվող գյուղատնտեսական մթերքի ճիշտ ընտրության, գնային և զեղչային համակարգերի կիռառման միջոցով: |
| Մոդուլի տևողությունը | 34 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել «Տնտեսագիտության տեսություն» առարկան |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար |

| | |
|---|---|
| | մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ մարքեթինգի էության, նպատակի, դերի, մոտեցումների, կառավարման գործընթացի և մարքեթինգի համալիրի չորս հիմնատարրերի իմացություն |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի մարքետինգի սահմանումը և դերը տնտեսությունում,<br>բ. գիտի մարքետինգի կառավարման հինգ մոտեցումները,<br>գ. գիտի մարքետինգի համալիրի սահմանումը և չորս հիմնատարրերը /չորս P-երը/,<br>դ. ծանոթ է մարքետինգային գործունեությունը կարգավորող օրենսդրությանը և օրենսդրական ակտերին: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ մարքեթինգային տեղեկատվական համակարգերի և հետազոտությունների էությունն ու մեթոդները, մարքեթինգային միջավայրը |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի տեղեկատվության կարևորությունը կազմակերպության մարքետինգային ռազմավարության մշակման համար,<br>բ. կարողանում է բնութագրել մարքետինգային տեղեկատվական համակարգի բաղկացուցիչները,<br>գ. կարողանում է թվարկել մարքետինգային հետազոտության անցկացման փուլերը,<br>դ. կարողանում է համեմատականներ անցկացնել տեղեկատվության հավաքագրման մեթոդների դրական և բացասական կողմերը,<br>ե. կարողանում է թվարկել կազմակերպության ներքին և արտաքին միջավայրի հիմնական գործոնները,<br>զ. գիտի շուկաների բաղդատման /սեգմենտացիան/ և առանձին ոլորտի ընտրության նպատակը, ապրանքների դիրքորոշման /positioning/ գործընթացը,<br>է. գիտի սպառողների վարքագծի չորս հիմնական գործոնները,<br>ը. գիտի սպառողի կողմից գնման որոշումը կայացնելու գործընթացի փուլերը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ապրանքների ստեղծման գործընթացի, ապրանքատեսակի, փաթեթավորման էության, գնի որոշման և քաղաքականության իմացություն |
| **Կատարման չափանիշները** | ա. գիտի ապրանքի սահմանումը, և դրանց դասակարգման հիմնական ձևերը,<br>բ. կարող է պարզաբանել ապրանքանիշերի ստեղծման նպատակը,<br>գիտի ապրանքի փաթեթավորման դերը և գրանշումները,<br>գ. գիտի գյուղատնտեսական ապրանքների փաթեթավորման առանձնահատկությունները, շ<br>դ. գիտի փաթեթավորման ստեղծման գործընթացը, փուլերը, փաթեթավորման նախագծերի գնահատման հիմնական չափանիշները,<br>ե. գիտի փաթեթավորման վրա նշվող անհրաժեշտ տեղեկատվությունը,<br>զ. գիտի շուկայական մրցակցության չորս հիմնական տիպերը,<br>է. գիտի ապրանքի պահանջարկի և գնի նախնական որոշման մեթոդները, գնային քաղաքականության էությունը,<br>ը. կարող է ներկայացնել վերջնական գնի որոշման վրա ազդող երեք գործոնները,<br>թ. գիտի զեղչերի հինգ հիմնական տեսակները և կիրառման ձևերը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ապրանքների շուկայահանման մեթոդների, մանրածախ և մեծածախ առևտրի առանձնահատկությունների, վաճառքի խթանման ձևերի և մեթոդների իմացություն |

| | |
|---|---|
| Կատարման չափանիշները | ա. գիտի բաշխման ուղիների մակարդակները, տեսակները և գործառույթները,<br>բ. կարող է համեմատել բեռների տեղափոխման հինգ հիմնական ձևերի կիրառումը գյուղատնտեսական ապրանքների տեղափոխման դեպքում,<br>գ. գիտի մանրածախ և մեծածախ առևտրականների դերը ապրանքաշրջանառության գործընթացում,<br>դ. կարող է թվարկել և բնութագրել մանրածախ առևտրային կազմակերպությունների հինգ տեսակները,<br>ե. կարող է թվարկել և բնութագրել մեծածախ առևտրային կազմակերպությունների չորս տեսակները,<br>զ. կարող է անվանել և բնութագրել ապրանքի վաճառքի խթանման համակարգի չորս հիմնական բաղկացուցիչները,<br>է. կարող է ներկայացնել ապրանքի վաճառքի խթանման տարրերի ընտրության գործընթացը և համապատասխան բյուջեի կազմումը,<br>ը. գիտի գովազդի դերը և նշանակությունը ապրանքի վաճառքի խթանման գործում:<br>թ. կարող է թվարկել և բնութագրել վաճառքի գործընթացի փուլերը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԱՆՋԱՐԱԲՈՍՏԱՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»** | |
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08-013 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ բաց և պաշտպանված գրունտի պայմաններում բանջարաբոստանային մշակաբույսերի աճման և զարգացման առանձնահատկությունների, բերքի ձևավորման հիմնական օրինաչափությունների, բույսերի մշակության, բերքահավաքի տեղափոխման և պահպանման ժամանակակից տեխնոլոգիաների, բանջարաբոստանային մշակաբույսերի սպսվելիք բերքի հնարավոր մակարդակի ծրագրավորման, այդ մակարդակի ապահովման համար ագրոնոմիական և կազմակերպչական միջոցառումների մշակման վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 102 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական ԳՏԿ 4-08-001 «Հողի եսակները,նրանց որակական գնահատումը», ԳՏԿ 4-08-002 «Հողի մշակման համակարգերը» մոդուլները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովու |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ բանջարաբոստանային մշակաբույսերի հիմնական տեսակները, նրանց կենսաբանական առանձնահատկությունները, աճի և զարգացման փուլերի անցման համար ունեցած պահանջները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի բանջարաբոստանային մշակաբույսերի տեսակները,<br>բ. գիտի բանջարաբոստանային մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկությունները,<br>գ. գիտի զարգացման փուլերի անցման համար ունեցած պահանջները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ բանջարաբոստանային մշակաբույսերի առանձին սորտերի վեգետացիայի տևողությունը և մշակության ժամկետները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի բանջարաբոստանային մշակաբույսերի վեգետացիայի տևողությունը,<br>բ. գիտի առանձին սորտերի մշակության ժամկետները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ աճի տարբեր փուլերում ունեցած պահանջները կախված բաց և պաշտպանված գրունտի պայմաններից |
| Կատարման չափանիշները | ա. գիտի բանջարաբոստանային մշակաբույսերի աճի տարբեր փուլերում ունեցած պահանջները բաց գրունտի պայմաններում,<br>բ. գիտի բանջարաբոստանային մշակաբույսերի աճի տարբեր փուլերում ունեցած պահանջները փակ գրունտի պայմաններում: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ բերքահավաքի ժամկետները, բերքահավաքի, բերքի տեղափոխման և պահեստավորման գործընթացները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի բերքահավաքի ժամկետների որոշման ձևերը,<br>բ. գիտի բերքահավաքի գործընթացները, կազմակերպչական, տեխնիկական և օժանդակ միջոցները,<br>գ. գիտի բերքի տեղափոխման տրանսպորտային, բեռնող և բեռնաթափող միջոցները,<br>դ. գիտի պահեստավորման համար անհրաժեշտ պայմանները և ռեժիմները: |
| Ուսումնառության արդյունք 5 | Իմանալ բանջարաբոստանային մշակաբույսերի մշակության մեքենայացման և խնամքի գործընթացները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի հողի նախապատրաստման` հողի հիմնական, մակերեսային և միջշարային մշակման գործընթացները, անհրաժեշտ |

| | |
|---|---|
| | մեքենաներն ու գործիքները,<br>բ. գիտի բույսերի պաշտպանության, սնուցման գործընթացները և անհրաժեշտ տեխնիկական միջոցները: |
| Ուսումնառության արդյունք 6 | Իմանալ փակ գրունտում մշակաբույսերի ցանքսի, մշակման և սածիլների ձևով աճեցման գործընթացները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի մշակաբույսերի սերմերի նախապատրաստման գործընթացը,<br>բ. գիտի տարբեր մշակաբույսերի ցանքսի նորմաները և ցանքսի ձևերը,<br>գ. գիտի սածիլների մշակման ագրոտեխնիկական պահանջները,<br>դ. գիտի սածիլների աճեցման գործընթացները,<br>ե. գիտի փակ գրունտից սածիլների հանման, տեղափոխման և սածիլման գործընթացները: |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ» | |
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08-014 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է գիտենա, որ գյուղատնտեսությունը յուրաքանչյուր տարի ունենում է բերքի կորուստ հիվանդություններից և վնասատուներից: Ուսանողը պետք է գիտենա, թե ինչպես պետք է կրճատել բերքի կորուստը: Պետք է գիտենա, թե գյուղատնտեսական մշակաբույսերին ինչպիսի վնասատուներ են վնասում, բույսերը ինչ հիվանդություններով են վարակվում, ինչպիսի մոլախոտեր են աղբոտում ցանքատարածությունները: Պետք է կարողանա ճիշտ որոշել թունաքիմիկատների դոզան, թունանյութի պատրաստման տեխնոլոգիան, թունանյութերի հետ աշխատելու ձևը, անվտանգության տեխնիկան և ստանա տեղեկություններ նոր արտադրված բաժանյութերի մասին: |
| Մոդուլի տևողությունը | 104 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել ԳՏԿ 4-08-004 «Բույսերի կյանքին անհրաժեշտ գործոնները և նրանց ռեժիմը», ԳՏԿ 4-08-005 «Դաշտային մշակաբույսերի մշակության և բերքահավաքի տեխնոլոգիաները», ԳՏԿ 4-08-007 «Պտղի և խաղողի արտադրության տեխնոլոգիա» մոդուլները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ բույսերի հիվանդությունները և նրա դեմ պայքարի մեթոդները |
| Կատարման չափանիշները | ա. կարողանում է տարբերել հացահատիկային մշակաբույսերի, բանջարաբոստանային մշակաբույսերի, տեխնիկական մշակաբույսերի, պտղատուների խաղողի վազի և կարտոֆիլի հիվանդությունները և իրականացնի պայքարի համապատասխան միջոցառումներ,<br>բ. կարողանում է պայքարել սնկային և ինֆեկցիոն հիվանդությունների հարուցիչների դեմ: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ որոնք են բույսերի վնասատուները և նրա դեմ պայքարի մեթոդները |
| Կատարման չափանիշները | ա. կարողանում է տարբերել տարբեր մշակաբույսերի, կարտոֆիլի վնասատուներին և կարողանում է իրականացնել նրանց դեմ պայքարի միջոցառումներ,<br>բ. կարողանում է տարբերել կորիզավորների ընդավորների վնասատուներին և գիտենա նրանց դեմ պայքարի միջոցառումներ: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ հացահատիկի, բանջարեղենի և կարտոֆիլի հիվանդությունները պահպանման ժամանակ և պայքար դրանց դեմ |
| Կատարման չափանիշները | ա. կարողանում է պայքարել ֆիզիոլոգիական և կենսաբանական պրոցեսների դեմ հացահատիկի, բանջարեղենի և կարտոֆիլի պահպանման ընթացքում,<br>բ. կարողանում է պայքարել միկրոբիոլոգիական պրոցեսների դեմ հացահատիկի, բանջարեղենի և կարտոֆիլի պահպանման ընթացքում: |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» | |
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08-015 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ցանկաշրջանառության մեջ տարբեր մշակաբույսերի և ցելերի նշանակության, մոնոմշակաբույսի վնասակարության, նախորդող մշակաբույսի ընտրության, ցանկաշրջանառության ագրոտեխնիկայի, կերային դաշտային և հատուկ ցանկաշրջանառությունների կիրառման պայմանների, ջրովի, անջրդի և |

| | |
|---|---|
| | մելորացված հողերում կիրառվող ցանկաշրջանառությունների, նրանց սահմանման և նախագծման վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 82 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրել ԳՏԿ 4-08-001 «Հողի տեսակները, նրանց որակական գնահատումը», ԳՏԿ 4-08-002 «Հողի տեսակները» մոդուլները: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ մենամշակաբույսի վնասակարությունը և նախորդող մշակաբույսի դերը և ընտրությունը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի նույն դաշտում անընդմեջ նույն մշակաբույսի մշակման վնասակարությունը,<br>բ. գիտի նախորդող մշակաբույսի դերը և ընտրությունը: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ ցանկաշրջանառությունների տեսակները և նրանց կիրառման պայմանները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի ցանկաշրջանառությունների տեսակները,<br>բ. գիտի ցանկաշրջանառությունների կիրառման պայմանները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ ցանկաշրջանառության ագրոտեխնիկական հիմնվորումները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի ցանկաշրջանառության ագրոտեխնիկական հիմնավորումները: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ կերային, դաշտային և հատուկ ցանկաշրջանառությունների կիրառման, պայմանները և նշանակությունը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի կերային, դաշտային և հատուկ ցանկաշրջանառությունների կիրառման պայմանները,<br>բ. գիտի կերային, դաշտային և հատուկ ցանկաշրջանառությունների նշանակությունը: |
| Ուսումնառության արդյունք 5 | Իմանալ ջրովի, անջրդի և մելիորացված հողերում կիրառվող ցանկաշրջանառությունները |
| Կատարման չափանիշները | ա. ճիշտ է շարադրում ջրովի և անջրտի պայմաններում կիրառվող ցանքաշրջանառությունները,<br>բ. ճիշտ է շարադրում մելորացված հողերում կիրառվող ցանքաշրջանառությունները: |
| Ուսումնառության արդյունք 6 | Իմանալ ցանկաշրջանառությունների սահմանումը և նախագծումը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի ցանկաշրջանառությունների սահմանման դրույթները,<br>բ. կարողանում է կատարել ցանքաշրջանառությունների նախագծում: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ»** | |
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08-016 |
| Մոդուլի նպատակը | Մոդուլի նպատակն է ապագա մասնագետին տալ լիարժեք գիտելիքներ, գյուղ. կենդանիների և թռչունների տեսակների աճեցման ու զարգացման գործընթացների, անասնաբուծության ճյուղերում արտադրվող հիմնական մթերքների և օժանդակ արտադրանքների ստացման տեխնոլոգիական գործընթացների և դրանց կազմակերպման հմտությունների ձևավորման վերավերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 104 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլն ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքնչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ խոշոր եղջրավոր կենդանիների ցեղերը և դրանց արտադրատնտեսական ցուցանիշները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի խոշոր եղջերավոր անասունների առանձին ցեղերի մթերատվության ուղղությունները,<br>բ. գիտի տավարաբուծությունից ստացվող կաթի, մսի օժանդակ արտադրանքների ստացման տեխնոլոգիական գործընթացները,<br>գ. կարողանում է կազմակերպել կաթի, մսի արտադրության գործընթացները,<br>դ. կարողանում է կազմակերպել տավարի մատղաշի բուծման գործընթացները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ խոզերի ցեղերը, բուծումը և տեխնոլոգիական գործընթացները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի խոզերի ցեղերի տեսակները և դրանց առանձնահատկությունները<br>բ. գիտի խոզերի վերարտադրության կազմակերպման գործընթացները, |

| | |
|---|---|
| | գ. գիտի խոզերի բտման տեսակները և կազմակերպման գործընթացները,<br>դ. գիտի խոզերի պահվածքի եղանակները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ մանր եղջերավոր կենդանիների ցեղերը, մսի, բրդի, կաթի արտադրության տեխնոլոգիական գործընթացները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի ՀՀ-ում տարածված ոչխարների ցեղերը և դրանց մթերատվության հատկանիշները,<br>բ. գիտի ոչխարների սեռահասակային խմբերը և պահվածքի եղանակները,<br>գ. կարողանում է կազմակերպել առանձին արտադրական խմբեր,<br>դ. կարողանում է հաշվարկել ոչխարաբուծական ծյուղից ստացվող մթերքների տնտեսական արդյունավետությունը: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իմանալ ՀՀ-ում բուծվող թռչունների ցեղերը, թռչնամսի, ձվի և ճտերի արտադրության տեխնոլոգիական գոևծընթացները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի թռչունների տեսակները, ցեղերը և դրանց մթերատվության հատկանիշները,<br>բ. գիտի թռչունների պահվածքի եղանակները և հիմնական տեխնոլոգիական գործընթացները,<br>գ. կարողանում է կազմակերպել թռչնաբուծության հիմնական աշխատանքային գործընթացները: |
| Ուսումնառության արդյունք 5 | Իմանալ արհեստական լճակներում ծածան և իշխան տեսակի ձկների աճեցման տեխնոլոգիական գործընթացները |
| Կատարման չափանիշները | ա. գիտի ՀՀ-ում տարածված ձկնատեսակները և դրանց շուկայական գնահատականը:<br>բ. գիտի ձկնաբուծության հիմնական գորընթացները,<br>գ. կարող է կազմակերպել ձկան արտադրությունը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄ ԵՎ ԽՆԱՄՔ»** | |
| Մոդուլի դասիչը | ԳՏԿ 4-08-017 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլի նպատակն է տալ գիտելիքներ գյուղատնտեսական կենդանիների պահվածքի, խնամքի, կերակրման գործընթացների, տարբեր արտադրական ուղղություն ունեցող ֆերմաներում առանձին սեռահասակային խմբերի խնամքի և պահվածքի տեխնոլոգիաների վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 85 ժամ |
| Մուտքային պահանջները | Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախապես անհրաժեշտ է ուսումնասիրելԳՏԿ 4-08-016 «Անասնապահական մթերքների արտադրություն» մոդուլը: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշի լիարժեք ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Իմանալ տավարի պահվածքի տեխնոլոգիաները և խնամքը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի տավարի պահվածքի մսուրա-արոտային և շուրջտարվա-մսուրային համակարգերը,<br>բ. գիտի տավարի /արտադրող ցուլեր, կովեր, մատղաշ/ պահվածքի տիպերը և խնամքի աշխատանքները,<br>գ. գիտի տավարի տարբեր սեռահասակային խմբերի կերակրման և խնամքի առանձնահատկությունները:<br>դ. գիտի հորթերի խնամքի և կերակրման գործընթացները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանալ մանր եղջերավոր կենդանիների պահվածքի տեխնոլոգիաները և խնամքը |
| Կատարման չափանիշները | ա. գիտի մանր եղջերավոր կենդանիների պահվածքի տեխնոլագիաները, խնամքը և կերակրման առանձնահատկությունները,<br>բ. գիտի տարբեր սեռահասակային խմբերի պահվածքի և խնամքի առանձնահատկությունները,<br>գ. գիտի գառների խնամքի կերակրման գործընթացները, |
| Ուսումնառության արդյունք 3 | Իմանալ խոզերի պահվածքի տեխնոլոգիաները և խնամքը |
